ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 136
22 մայիսի 2020թ.

Լոռու մարզի մարզպետ
Պարոն Ա.Ղուկասյանին

Եղեգնուտի Համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում համայնքի ավագանու թիվ 9,10 որոշումները:

Համայնքի ղեկավար՝ Ս. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3 փ. N 2
հեռախոս 6-83-37 էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 մայիսի 2020 թվականի N 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԵՔԻԱԹ» ՀՈԱԿԻ ՊԱՐԱՊՈՒՐԴԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ.-ի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ և «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» Պարետի թիվ 27 որոշմամբ՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաշվի առնելով երկրում տիրող արտակարգ դրությունը՝ կապված նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելուն, սույն թվականի մարտի 16-ից համայնքի «Հեքիաթ» ՀՈԱԿ-ի պարապուրդը համարել օրինական՝ անորոշ ժամանակով:
2. ՀՈԱԿ-ի աշխատակիցներին վճարել չաշխատած ժամանակահատվածի համար՝ ըստ դրույքաչափի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Աղաջանյան Գառնիկ			
Գալստյան Սեյրան			
Կարապետյան Գրիգոր			
Պողոսյան Արթուր			

Համայնքի ղեկավար՝ _____ Ս.Հակոբյան
անուն ազգանուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
գ. Եղեգնուտ
էլ. փոստ՝ yeghegnut.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18 » մայիսի 2020 թվական, թիվ 10-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 02-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 11-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Եղեգնուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Աղաջանյան Գառնիկ			
Գալստյան Սեյրան			
Գրիգորյան Լիդիյա			
Կարապետյան Գրիգոր			
Պողոսյան Արթուր			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ _____ Ս.Հակոբյան
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի ավագանու
2020 թվականի մայիսի 18 -ի N 10-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Բեջան Քյոմուրի Վանյան ---- երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
2. Արարատ Ռուբենի Ալիխանյան ---- տասնհինգ հազար դրամ, սոց. օգնություն

Ընդամենը՝ քառասունհինգ հազար դրամ:

ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Կ.ԱՎԵՏԻՔՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)